

ԱՐ ՈՒԽՏԱԴՐՈՒԺ ԱՄ ՈՒՍՆԱԻ ՈՐՆ

Ի պատասխանի «Աքեւոյ վերնագրով էրդոյն» (Տե՛ր Քւու Հայութ, Տիու Մռուկ, Էրեւ Ֆօթ)։

**Ա**նթրին հագած, շափսան ծռած, պառտօնի հետ խաղալով,  
Ժամեն փախած դէսպ ՚ի պանդոկ գնում էր նա խիստ ձեպով։

Դիշերային մութ խաւարը տեղի տուաւ այդլուսին,

Բայց պարոնը անզգայ էր առաւտուեան իւր պարտքին։

Եկեղեցում ամեն մարդիկ Տէր զօրութեանց կ'օրհնէին,

Օկրք եւ տղայք, արք եւ կանայք քաղցր ձայնիւ կ'երդէին։

Թող պատարագ, աղօմք, մաղթանք, խնկարկութիւնք էլ լինէր,

Նորա սիրոը մոլորուել էր, նա պատարագ սիրող չէր։

(Ճապտոյտ մի փողոցէ մէն միայնակ գնում էր,

Դիւարնակ պանդոկ մի կար, նա անդ փութով կ'ըշտապէր։

Եւր փող, նուագ, օղի, գինի . . . երգ դիւական պատրաստ էր։

Գնա՛, պարոն, ուր քարշում է մագնիս մեղաց քո հոգին,

Դիտէ Կատուած, դիտեն մարդիկ, գիտէ աշխարհ քո ուղին։

Դու շատ յետոց ցաւիս պիտի, այդ քեզ համար խիստ վատ է,

Մարդկան ազգը չար լեզու չէ, քեզկէսները կը խրատէ։

«Զեմ գլուխ հողեր բամբասողին, Ճշնարտութիւնն յաղթողէ»՝

Բա՛ց քո մոտաց ականնցն, որդեակ, այս խնդիրըս իմ լուծէ։

Դեզ ովլ ուսոյց ամուսնական արհամարհնել սուրբ դաշինք,

Ի սէր օտար դրժել ուխտին՝ անտէր թողուլ ընսանիք։

Ենապատսպար, մերկ ու ծարաւ, անկիշում, անուս քո որդիք,

Օռած վզով, արտասուաթոր քեզ կը պատասեն անօթիք։

«Կրօնէն աւել չունենալով հզօր պաշտպան աշխարհ քում».

Կրօնը, պարոն, ուսոյց այդպէս կեանքդ վատնել պանդոկում,

Թէ կարձամիտ դատողութիւնդ նոր մե՛ծ օրէնք կարծելով,

Կամիս յետոց փոյթ աւանդել, ցանկ հայրենեացդ քակելով։

Թէ դու էիր իմաստասէր, այր կատարեալ կրօնագէտ,

Մեծ գիտութեամբդ, բայց ամենէն ինչու համար խիստ տգէտ։

Ենիսնը ուսեալ, մեծ բնագէտ, պաշտող բնութեան օրինաց,

Դեզ կարծելով շատոնց նման ամուսնացար անկասկած։

Թէ հոգին բորբոքուած էր ամուսնութեան սուրբ սիրով։

Օյր վայելել դու կարծեցիր լոկ ամուսին կոջուելով։

Աէր եմ ասում, զօր սիրեցին Յովսէփ, Արայ, մեծ Ամբատ,

Արտակ, Աւահան, Արդան, Խորէն, նոցա հետ էլ շատ Տաճատ։

Դտած արդեօք, որոնածդ փափառանացդ դու հասա՞ր,

Թէ սուրբ ուխտիդ դու մխտեցեր զերթ հեշտասէր մեղիացար,

Այժմ գո՞հ ես դու վիճակէդ, ունիս արդեօք խաղաղ խիղճ,

Թէ յիշելով կեանք մենաւոր հառաջում ես ՚ի թախիծ։

Խակ երբ նստած ամուսնոյդ հետ խօսակցում ես քո տան մէջ,  
Հեր վերացած, հեր կրում ես օտարին սէր սրտիդ մէջ,  
Վրդեօք ինչու մարմնովդ ՚ի տան, հոգիդ պանդոկն ես թողած,  
Եղութիւ հաւայ ամուսինդ, թէ քո սրտին, զոր օտարին ես տուած:

Եղայր, ես քո հոգւոյն մատազ, թէ որոշումէդ չես խաբուած,  
Պանք, Երեզայ դու խոտելալ ընութեան օրէնքն ես յարգած.  
Երբ դու մի օր արժանանաս լցոս անթառամ պսակին,  
Բարեխօս լեր վասն մեղաց Աղմօսերդու Ակարիւ:

### Ի Դ Զ Պ Ա Ն Դ Խ Տ Ի Ն

Պանքուխօտ հեք մանկիկն  
Ի տիուր դաշտին  
Հեծէ սիրադին :

Երբ դողդով լուսնակ ՚ի կապցոտ յեթեր  
Վառէր եւ փայլէր իւր արծաթ շողեր,  
Երբ ծաղիկն ՚ի ցող ժպտէր խնդագին  
Եւ դաշտն եւ դալար ՚ի զուարթ հողմոյն  
Ծածանէր սիրուն զերթ ալիք ծովուն:

Կայի տիրագին ՚ի տեսիլ համբուն  
Շքեղ բընութեան բիւր աղդի գեղցն.  
Բայց չէր հայրենեացս այս դաշտ այս երկինք  
Ո՛չ աստեղք, արեւ, ոչ մարդ ու գետինք  
Ո՛չ վճիտ աղբերք ոչ պայծառ վտակիք  
Ո՛չ կակաչ քներբուկ ոչ վարդ մանիշակ:

Ո՛չ թռչնիկ ՚ի թռուփ ճռուղիկ մեղմիկ  
Ի յառաւօտու իւր օրհներդ քաղցրիկ,  
Զը հնչէր զեփիւռ ոչ սիւր հայրենեացս  
Տիսուր էր այս դաշտ տիսուր ՚ի փառաց:

Ի տիսուր դաշտիս խելառ ու մոլար  
Զերթ մի բունաւեր թռչնիկ մի անձար  
Բոկ ու հոլանի զուրկ յիմ փառքերէն  
Յուղէի լալեօք սար ու ձոր ամեն,  
Խնդրէի անձկով մի սիրուն թռչնակ  
Որ տանէր յետին հրամեցաս իմ եղբարց:

Այն ինչ պիշ յերկինս պիշ ՚ի ծերպս ՚ի յաստա  
Յուղէի այսպէս ես ցաւօք լալեօք  
Խօսեցաւ հոգւոյս լուսնակն ՚ի յերկինց  
Զարթեցաւ հոգիս թրթուաց իմ սրտիկ  
Զերմացաւ արխւնս զուարթացաւ աշբունքս: